ՍԱՐԱԿԱՊԻ ԿԵՆՏՐՈՆԱԳՄԲԵԹ ՀՈՒՇԱՐՁԱՆԸ

ՄՈՒՐԱԴ ՀԱՍՐԱԹՅԱՆ

Հայկական ՍՍՀ Անիի շրջանի Սարակապ գյուղի կենտրոնում կանգուն է իր հորինվածքով եզակի և հայ ճարտարապետության պատմության համար չափազանց կարևոր ս. Աստվածածին եկեղեցին, որը, սակայն, մինչև վերջին տարիներս անհայտ էր մասնագիտական գրականության մեջ[1]։ Այն ավերակ վիճակում դարեր շարունակ ծածկված է եղել հողով և միայն XIX դ. երկրորդ կեսին պատահականորեն հայտնաբերվել և 1885—1887 թթ. նորոգվել ու վերածվել է գործող եկեղեցու[2]։ Հուշարձանի նախնական կառուցվածքից պահպանվել է վաղ միջնադարի հայ ճարտարապետությանը բնորոշ սև տուֆի, սրբատաշ, խոշոր քարերից կրաշաղախով շարված երկատիճան որմնախարիսխը։ Վերակառուցման ժամանակ պատերը բարձրացվել են որմնախարսխի պարագծով, հետևաբար, նույնությամբ պահպանվել է հնագույն կառուցվածքի հատակագծային հորինվածքը։ Պատերի վերակառուցված մասերը նույնպես տեղական սև, սրբատաշ տուֆից են՝ կրաշաղախով։ Պատերի շարվածքի մեջ օգտագործվել են հին շենքի որոշ քարեր, որոնցից մեկի վրա կա XIII դ. արձանագրություն։ Եկեղեցին վերակառուցվել է մինչև գմբեթի թմբուկի ստորին շարքերը։ Ներկայիս փայտյա հարթ ծածկը հենվում է չորս փայտյա սյուների վրա։ Սարակապի ս. Աստվածածին եկեղեցու հատակագիծն ունի աստղաձև, կենտրոնաձիգ հորինվածք՝ սիմետրիկ արևելք-արևմուտք առանցքին։

Հատակագծային հորինվածքի հիմքում ընկած է հավասարաթև խաչը, որի չորս թևերը ներսում ավարտվում են աբսիդներով, իսկ դրսից ունեն ուղղանկյուն եզրանկար։ Միայն արևելյան՝ բեմի խաչաթևը դրսից բազմանիստ է (եռանիստ)։ Սակայն, ի տարբերություն քառախորան հուշարձանների, Սարակապի եկեղեցում աբսիդների միջև իրականացված են լրացուցիչ ծավալներ, որի պատճառով հիմնական՝ քառախորան հորինվածքի խաչաթևերը հեռացված են միմյանցից։ Կառույցի հյուսիս-արևմտյան և հարավ-արևմտյան անկյուններում այս լրացուցիչ ծավալներն ունեն մոտավորապես եռանկյան տեսք (ավելի ճիշտ՝ սեղանի և եռանկյան զուգակցման ձև), իսկ հյուսիս-արևելյան և հարավ-արևելյան անկյուններում այդ լրացուցիչ ծավալները հանդես են գալիս որպես անցում, նախամուտք դեպի բեմի աբսիդի երկու կողմերում գտնվող ավանդատները։ Վերջիններս ուղղանկյուն են, թաղածածկ և արևելյան կողմում ավարտվում են կիսաշրջանաձև աբսիդներով։ Ավանդատների առկայության պատճառով Սարակապի հուշարձանը սիմետրիկ չէ հյուսիս-հարավ առանցքին։ Սակայն կարելի է ենթադրել, որ սկզբնական հորինվածքում ավանդատներ չեն եղել, այլ դրանք ավելացվել են XIX դ.

---

1 Հուշարձանի համառոտ նկարագրությունը տե՛ս Հովսեփ Եղիազարյան, Շիրակի լեռնահովտի պատմական հուշարձանները, Երևան, 1975, էջ 54—55։

2 Նույն տեղում, էջ 54։

վերակառուցման ընթացքում։ Այսպիսի վարկածի համար հիմք են ծառայում լրացուցիչ, եռանկյունաձև ծավալների մասնակի արտահայտվելը հուշարձանի հյուսիս-արևելյան և հարավ-արևելյան անկյուններում և խաչաթևերի երկարությունների հավասարությունը, որի հետևանքով ավանդատները դեպի արևելք զգալիորեն դուրս են բեմի աբսիդի արևելյան ճակատի հարթությունից։ Հնագույն որմնախարիսխը տեղում երևում է մինչև ավանդատները և միայն մասնակի պեղումից հետո կարելի է պարզել՝ այն անցնո՞ւմ է եկեղեցու ներկա հորինվածքի ողջ պարագծով, թե՞ ոչ։

Նկ. 1. Սարակապի եկեղեցին հարավ-արևմուտքից։

Սարակապի եկեղեցին ունի երկու մուտք՝ հարավից և արևմուտքից։ Այժմյան մուտքերը կամարակապ վերջավորությամբ ուղղանկյուն բացվածքներ են՝ երկու կողմերում պարզունակ իմպոստներով։ Լուսամուտները սակավաթիվ են, սակայն բավական լայն։ Եկեղեցու ներքին տարածությունը լուսավորվում է բեմի, հարավ-արևելյան անկյան և եռանկյունաձև ծավալների արևմտյան պատերում տեղադրված լուսամուտներով (մեկական նեղ լուսամուտ ունեն նաև ավանդատները)։ Հուշարձանը զուրկ է հարդարանքից։ Ողջ պարագծով, նույն բարձրությամբ ընթացող քիվը բաղկացած է սոսկ կորագիծ վերջավորությամբ սալիկից։

Եկեղեցու հորինվածքի մեջտեղում բարձրացել է գմբեթը, որի թմբուկը հիմքում ութանկյուն է եղել։ Գմբեթատակ ութանկյունը ստացվում է աբսիդների և եռանկյունաձև խորշերի անկյունների միջև ձգվող կամարներով։ Սակայն այդ ութանկյունը կանոնավոր չէ, որը բխում է հյուսիսային և հարավային աբսիդների անկանոնությունից (դրանք հատակագծում ոչ թե կիսաշրջանաձև են, այլ՝ կիսաձվաձև)։ Պետք է ենթադրել, որ դա XIX դ. վերակառուցման ժամանակ աբսիդների կիսաշրջանաձև նախնական հատակագծերի աղավաղման հետևանք է։ Գմբեթարդներով են ծածկվում ինչպես խաչաթևերի չորս աբսիդները, այնպես էլ եռանկյունաձև խորշերը։

Սարակապի հուշարձանի արտաքին տեսքը բխում է ներքին տարածական հորինվածքից և միանգամայն հարազատ է նրան։ Եռանկյունաձև խորշերը

դրսից ունեն նույն եզրագիծը, իսկ խաչաթևերը ոչ թե կիսաշրջանաձև են, այլ՝ ուղղանկյուն։ Եռանկյունաձև ծավալները ստեղծում են լույս ու ստվերի ուժեղ խաղ և զգալիորեն աշխուժացնում հուշարձանի զուսպ արտաքին կերպարը։ Այս նպատակին են ծառայում նաև դրանց և խաչաթևերի անկյուններում իրականացված փոքր, եռանկյունաձև կտրվածքով որմնասյուները, որոնք եղել են և նախնական հորինվածքում (այդ ելուստները արտահայտվում են նաև հնագույն որմնախարսխում)։ Խաչաթևերի անկյուններում նման ելուստների առկայությունը բնորոշ է վաղ միջնադարի հայ ճարտարապետությանը և հանդիպում են հատկապես փոքր խաչաձև գմբեթավոր եկեղեցիներում (Փարպի, Ծփնի, Զարնջա, Քարաշամբ, Արտաշավան)։

Եռանկյունաձև լրացուցիչ ծավալների հիմնական նպատակը կառույցի ներքին տարածության ընդարձակումն է։ Խաչաթևերի միմյանցից հեռացնելը հնարավորություն է տվել ներսում ստանալ բավական մեծ, առանց հենակետերի միասնական տարածություն՝ ծածկված գմբեթով (վերջինիս ներքին տրամագիծը հասնում է մոտ 8 մ-ի)։ Միաժամանակ եռանկյունաձև ծավալները լրացուցիչ կոշտություն, կայունություն են հաղորդում կառույցի ողջ ծավալատարածական հորինվածքին, դրանով իսկ բարձրացնելով նրա սեյսմակայունությունը։ Ինչպես նշվեց, Սարակապի հուշարձանի հորինվածքի ստեղծման համար ելակետ է հանդիսացել վաղ միջնադարից հայ ճարտարապետությանը քաջ հայտնի քառախորան եկեղեցու տիպը։ Հայաստանում V—VII դդ. նմանօրինակ հուշարձաններից են Ծովինարի Մորո ձորի վանքի ս. Աստվածածին, Տայքի Սբխեչ, Արզնիի ս. Կիրակի, Հոգեվանքի, Օշականի Մանկանոց ս. Սիոն, Փարպիի Թարգմանչաց, Ագրակի Ստեփանոս նախավկա եկեղեցիները[3]։ Սակայն Սարակապի ս. Աստվածածին եկեղեցին իր հորինվածքով եզակի է հայ ճարտարապետության կենտրոնագմբեթ կառույցների շարքում։ Այն առնչվում է միայն հայկական կենտրոնագմբեթ կառույցների մի այլ՝ բավական հայտնի Ավան-Հռիփսիմեի տիպի հուշարձաններին։

Մշակվելով Հայաստանում VI դ. վերջերին, այս տիպը հետագայում լայն տարածում ստացավ, իսկ հայ ճարտարապետները և քարգործ վարպետները հռիփսիմեատիպ եկեղեցիներ կառուցեցին նաև երկրի սահմաններից դուրս[4]։ Այս հորինվածքի հիմքն է գմբեթով պսակվող քառակուսի ծավալը, որը չորս կողմերում ունի հենախորշեր (տվյալ դեպքում խորաններ), անկյուններում՝ երեք քառորդ խորշեր, որոնցից իրականացվում է անցումը դեպի ավանդատները[5]։ Հայաստանում VI—VII դդ. այդպիսի հուշարձաններից են Ավանի ս. Հովհաննես, Արամուսի Տիրանավոր ս. Նշան, Էջմիածնի ս. Հռիփսիմե, Գառնահովտի ս. Գևորգ, Սիսիանի ս. Հովհաննես, Այգեշատի Թարգմանչաց, Զորադիրի ս. Էջմիածին, Արծվաբերի ս. Աստվածածին եկեղեցիները։ X—XI դդ. են պատկանում Աղթամարի ս. Խաչ, Վարագավանքի ս. Աստվածածին,

---

3 Վ. Գ. Գրիգորյան, Վաղ միջնադարի հայկական քառախորան հուշարձանները (ՀՍՍՀ ԳԱ «Լրաբեր», 1976, № 1)։

4 Տիրան Մարությյան, Ավանի տաճարը և համանման հուշարձանները, Երևան, 1976։ П. М. Мурадян, Армянская надпись храма Джвари (ՀՍՍՀ ԳԱ «Լրաբեր», 1963, № 2)։ А. Б. Еремян, Храм Рипсимэ, Ереван, 1955; А. Б. Еремян, К вопросу о датировке кафедральной церкви в Аване (ՀՍՍՀ ԳԱ «Լրաբեր», 1969, № 3)։

5 J. Strzygowski, Die Baukunst der Armenier und Europa, t. 2, Wien, 1913 S. 470.

Քոչատակի ս. Աստվածածին եկեղեցիները։ Այս հուշարձանների ճնշող մեծամասնությունը չորս անկյուններում ունի ավանդատներ, որոնք, աբսիդների հետ միասին, ներգծված են հատակագծի ուղղանկյուն եզրանկարի մեջ։ Սարակապի եկեղեցու հորինվածքը վկայում է, որ հուշարձանը Ավան-Հռիփ-



Նկ. 2. Սարակապի եկեղեցու հատակագիծը։

սիմեի այն ենթատիպի զուգահեռն է, որը արևմտյան կողմում չունի ավանդատներ, իսկ խորանները (բացառությամբ արևելյանի) իրենց ողջ ծավալով շեշտվում են կառույցի արտաքին կերպարում։ Այդպիսիք են Վասպուրականում գտնվող Զորադիրի և Աղթամարի եկեղեցիները (նորագույն ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ Այգեշատի Թարգմանչացը նույնպես արևմուտքում չունի ավանդատներ)[6]։ Զորագիրի ս. Էջմիածին եկեղեցում (VI դ. վերջ) ավանդատները բեմի երկու կողմերում են միայն, իսկ երեք քառորդ խորշեր իրականացված են գմբեթատակ քառակուսու չորս անկյուններում՝ հուշարձանի ներքին տարածությանը երկու գլխավոր առանցքների նկատմամբ սիմետրիկ լուծում տալու համար[7]։ Աղթամարի ս. Խաչը, կառուցված

[6] Տիրան Մարության, նշվ. աշխ., էջ 93—100։

[7] Paolo Cuneo, L'église de Saint-Etchmiadzine a Soradir dans le Vaspurakan,

Զորադիրի օրինակով, դրեթե կրկնությունն է վերջինիս հորինվածքի (Վասպուրականում նորահայտ Արծվարերի եկեղեցին արևմտյան կողմում ավանդատների փոխարեն ունի կամարակապ բաց սրահներ)[8]։

Սարակապի և Զորադիրի հուշարձանների ճարտարապետական ձևերի համեմատական վերլուծությունը վեր է հանում նրանցում եղած ընդհանրությունները և տարբերությունները։ Ընդհանրություն նկատվում է ողջ մտահղացման մեջ. գմբեթակիր քառախորան հորինվածք՝ անկյուններում ընդարձակված լրացուցիչ ծավալներով, դեպի դուրս շեշտված խորաններով և արևելքում ուղղ ավանդատներով։ Սակայն Զորադիրում գմբեթատակ քառակուսու անկյուններում իրականացված են երեք քառորդ խորշեր և ավանդատները արևելյան ճակատի հարթությունից դուրս չեն գալիս, իսկ Սարակապում լրացուցիչ ծավալները դրսից և ներսից եռանկյունաձև են և ավանդատները իրենց երկարության կիսով չափ դուրս են արևելյան ճակատից։ Ընդ որում, եթե Զորադիրում այդ ենթատիպը զարգանալու հնարավորություն ունի (արևմտյան երեք քառորդ խորշերը հնարավորություն են տալիս այդ կողմում ավանդատներ ավելացնելու), ապա Սարակապում եռանկյունաձև խորշերը փակուղի են և սենյակներ ավելացնել հնարավոր չէ։

Սարակապի եկեղեցու հորինվածքը ակնհայտորեն ավելի պարզունակ է և նախնական, քան Ավան-Հռիփսիմեի տիպի հուշարձանների հորինվածքը։ Լինելով դեպի այս տիպը տանող անցումային ձևերից մեկը, Սարակապի եկեղեցին նախորդել է հռիփսիմեատիպ կառույցներին, նրա թվագրումը VI դ. երրորդ քառորդով միանդամայն հավանական է և համապատասխան այս եզակի հուշարձանի ճարտարապետական առանձնահատկություններին։

ЦЕНТРАЛЬНОКУПОЛЬНЫЙ ПАМЯТНИК В САРАКАПЕ

МУРАД АСРАТЯН

Резюме

В с. Саракап Анийского р-на находится уникальный архитектурный памятник, неизвестный в специальной литературе. Руины Саракапской церкви были обнаружены при земляных работах в XIX в., после чего она была основательно реконструирована с сохранением первоначальной звездообразной композиции. В основе последней лежит тетраконх, с дополнительными треугольными помещениями. Архитектурно-художественный анализ позволяет датировать церковь св. Аствацацин Саракапа третьей четвертью VI века.

Revue des Etudes Arméniennes, V. Parts, 1968; Tommaso Breccia Fratadocci, The Church of St. Ejmiacin at Soradir, Roma, 1971.

[8] Michel Thierry, L'église arménienne de la Mere de Dieu d'Arcuaber, Cahiers archéologiques, XXV, Paris, 1976.